№ 43 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 — 1902 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 № 43

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական խորհրդակցութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Մի կօնցէրտ էլ. Նամակ Շամախուց. Նամակ Հին-Նախիջեւանի գաւառից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական ազատամիտները. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երիցեանի դրական գործունէութեան մասին.

ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Ներկայ փետրվար ամսին Գանձակում տեղի ունեցաւ մի յատուկ խորհրդակցութիւն նահանգի կարիքներին մասին: Խորհրդակցութեան մասնակցում էին մի քանի մասնագէտներ, գաւառապետներ և երկրի տնտեսական կարիքներին տեղեակ անձինք: Խորհրդակցութեան նիստերը տեղի ունէին նահանգապետի նախագահութեամբ:

Խորհրդակցութիւն հրաւիրելու և կազմակերպելու միտքը շատ համակրելի է և արժանի առանձին յիշատակութեան: Դա առաջին փորձերից մէկն է, որի աջողութիւնը կարող է դրդել կազմակերպելու այդ խորհրդակցութիւնները պարբերական ձևով և կամաց-կամաց ընտելացնել տեղական գիւղատնտեսներին համախմբված գործունէութեան և փոխադարձ աջակցութեան:

Քանի մեր երկրում զեմստվո չէ մտցրած և տեղական գործողները կարողութիւն չունեն զեմստվոի միջոցով կազմակերպել տեղական գիւղատնտեսութեան զարգացման գործը, ցանկալի պէտք է համարվեն բոլոր այն միջոցները, որոնք փոքր ի շատէ փոխարինում են այն գործունէութիւնը, որ կարող էր ունենալ տեղական զեմստվոն: Գանձակի խորհրդակցութիւնը քննութեան ենթարկեց տեղական ազգաբնակութեան տնտեսական կարիքները, առաջարկեց մի շարք միջոցներ բարւոքելու տեղական կուլտուրան և մտցնելու նոր բոյսեր տնտեսութեան մէջ, որոշեց փորձերի համար բերել տալ սերմացուներ և դիւրացրած պայմաններով բաժանել գիւղատնտեսներին:

Մասնաւոր խորհրդակցութիւններ անցեալ տարիները տեղի են ունեցել Անդրկովկասի և ուրիշ տեղերում, բայց նրանք շատ սահմանափակ կերպով էին կազմակերպված և կրում էին պատահական բնաւորութիւն: Գանձակի ներկայ նախաձեռնութիւնը նպատակ ունի աւելի լուրջ գործ կազմակերպել, եթէ այդ աջողվի:

Անկասկած, սկսած գործը աջողութիւն կունենայ, եթէ նրա ղեկավարողների թւում չատ լինեն հմուտ և գործունեայ անձինք և եթէ նրանք աշխատեն իրագործել խորհրդակցական ժողովի որոշումները: Այն ժամանակ կը սկսի երևալ հաւատ դէպի այդ ձեռնարկութիւնը և նա կարող կը լինի գործնական օգուտ տալ ազգաբնակութեան: Այդտեղ ձևական վերաբերմունքը խպառ կը քանդէ բարի գործը, խեղդելով նրան իր սաղմի մէջ: Եթէ մասնագէտները և տեղական առաջադէմ գիւղատնտեսները եռանդով գործեն և վարչութիւնը օգնէ նրանց դրական օգնութիւն և վարչական աջակցութիւն ցոյց տալով—հետևանքները դրական կը լինեն: Այլապէս դա մի փորձ կը լինի՝ դատապարտված արագ վախճանի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վենետիկում հրատարակվող «Գեղունի» պատկերազարդ թերթի երկրորդ համարը (16 մեծադիր երես) ամբողջապէս նուիրված է հ. Ալիշանին: Այդտեղ մենք գտնում ենք բազմաթիւ պատկերներ, որոնք ներկայացնում են հ. Ալիշանին զանազան հասակներում, նրա վանական կեանքի զանազան միջոցները: Պատկերները, ինչ ասել կուզէ, շատ գեղեցիկ են: Մի մեծ յօդուածում պատմված է հ. Ալիշանի կեանքը. մի վանական վարդապետի կեանք, ի հարկէ, չէ կարող շատ բազմակողմանի լինել, մանաւանդ որ Ալիշանը ամբողջ երեսուն տարի ապրել է իր խուցի մէջ, չը հեռանալով վանքից: Նա մի քանի անգամ ճանապարհորդել է Եւրոպայում, վարել է տեսչական պաշտօն Ռափայէլեան, ապա եւ Մուրադեան վարժարաններում: Ահա այդ նշանաւոր ծերունու «ցուցակ ծառայութեանը»: Մահացած ժամանակը նա խուցի մէջ աշխատող մի զարմանալի ջանասէր վարդապետ էր: Հետաքրքրականը նրա պաշտօնական ծառայութիւնները չեն, այլ այն նստակեաց կեանքը, որ տասնեակ տարիների ընթացքում այնքան մեծ գրական վաստակներ ստեղծելու հնարաւորութիւն տուեց: Ահա այդ կեանքի վերաբերմամբ կենսագրութիւնը տալիս է մի ամբողջ պատկեր, որի մի քանի կտորները, կարծում ենք, անհետաքրքրական չեն լինի մեր ընթերցողների համար:

Առաջին վայրկենէն որ տեսաւ գիրքը՝ ըմբռնեց անոր օգուտը, կապուեցաւ սրտով անոր հետ, եւ բոլոր կենաց մէջ՝ ամեն պարագաներուն՝ իրեն միակ անբաժան ընկերն եղաւ: Գիրքը եւ գրիչը դիւթական ազդեցութիւն մ'ունէին վրան, եւ կը մոռնար ամեն բան, աշխարհ, կեանք, դիւրութիւն, պատիւ, զբօսանք, եւ այլն.—միակ բացառութիւնը կը կազմէին հոգեւոր եւ կրօնական պարտքերը, որոնց միշտ հաւատարիմ եւ սիրող եղած է, մանաւանդ թէ անոնք առաջին տեղը կը բռնէին իւր մտքին եւ սրտին մէջ: Նոյն էր իրեն համար՝ եթէ Ս. Ղազարու լռիկ խցիկին մէջ գտնուէր, եւ կամ Պարիզի նման բազմադղորդ քաղաքի մէջ, նա նոյնչափ խաղաղիկ՝ իրեն ժամագիրքով եւ գրիչով կը զբաղէր: Իրեն օրը ժամացուցի մ'անուի նման կը դառնային. իւրաքանչիւր վայրկեանը եւ բոպէն՝ իրենց յատուկ պաշտօնը ունէին, որոնք խիստ հարցաքննութեան մը կենթարկուէին օրը լմննալուն: Ինքը, որ իբրեւ բանաստեղծ խոյս պիտի տար միօրինակութենէն, ընդհակառակն չափազանց կանոնաւոր էր իւր օրական գործերու կարգին մէջ: Ամառ ու ձմեռ առաւօտեան ժամը 3-ին, եւ ամենէն ուշ՝ 3½-ին, կելլէր անկողնէն: Զմեռները, ցուրտին ու մութին, ճրագ մը բռնած ձեռքը, փիլոնին ծալքերուն մէջ փաթթուած, գլուխը անցուցած կնդուղը, երագ քայլերով կանցնէր վանքի լռիկ սրահներու միջէն, «Տէր, զի բազումս»-ը մրմնջելով, եւ ժամը 4-ին արդէն եկեղեցին էր, աւանդատան աղօթարանին վրա ծնրադիր, կը պատրաստուէր սուրբ Խորհրդոյն մատուցման: Յետոյ, նոյն ոճով աքեմին մէջ փաթթուած դարձեալ, սենեակը կը դառնար, ուր տասը վայրկենի կամ քառորդի չափ մրափելով անուշիկ մը, ճիշդ սահմանած բոպէին սթափելով կը փութար եկեղեցի, նոյն օրուան յիշատակին կամ տօնելի սուրբերուն վրա համառօտ մտածական մը ընելու, իբր նախապատրաստութիւն ժամերգութեան:

Յետ ժամերգութիւնը վերջանալուն, երկու պատարագ կը տեսնէր, իրեն մտածականը եւ աղօթքները կընէր, որոնցմէ միայն տկարութիւնը կրնար զինքը ազատ ընել, եւ կը դառնար սենեակը կարգաւորելու, եւ անմիջապէս նախաճաշի կիջնար: Առաջին ժամանակները, երբ դեռ տարիները չէին ծանրացած վրան, քալելով կընէր նախաճաշը, —որ ուրիշ բան չէր, բայց սակաւ մը կաթ եւ սուրճ եւ պատառ մը հաց,—լռութեամբ, եւ միայն կտրուկ պատասխան մը տալով՝ եթէ երբէք հարցում մուղղուէր իրեն: Նախաճաշը լմննալուն պէս, եթէ ձմեռ էր՝ սենեակը կելլէր, իսկ միւս երեք եղանակներուն՝ պարտէզ կելլէր, վայելելու գեղեցիկ, արեւոտ, պայծառ երկինքը, խաղաղ լճակը եւ Վենետկոյ մոգիչ տեսարանը: Եւ այդ վայրկեաններն իսկ գիտէր չահեցնել. գրպանէն գրքոյկ մը կը հանէր, եւ այսպէս մերթ դրքին, մերթ բնութեան էջերուն վրա կարդալով խորհրդածելու նիւթեր, կորոճար զանոնք, կընկղմէր սրբազան խոհերու մէջ, եւ կատարելով իրեն շրջանը, կը դառնար սենեակը՝ սկսելու իւր ուսումնական աշխատութիւնները: Սենեակը շատ անշուք եւ պարզ էր, չափաւոր ընդարձակութեամբ, որուն զարդերը կը կազմէին խաչելութիւն մը, քանի մը սրբազան պատկերներ, եւ իրեն կարեւոր գրքերը. նոյնպէս կահկարասին չափազանց անպաճոյճ էր, երկաթ մահճակալ մը, երկու գրադարաններ, գրասեղան մը եւ երկու աղօթարաններ:

Այդ սենեկին մէջ արտադրեց նա իւր բոլոր վիթխարի երկասիրութիւնները, ուր ոչ ոք կերթար զինքը խանգարելու: Այն պատկառանքը՝ զոր կազդէր մեր վրա իւր ներքի զանազան միջոցները: Պատկերները, ինչ ասել կուզէ, շատ գեղեցիկ են: Մի մեծ յօդուածում պատմված է հ. Ալիշանի կեանքը. մի վանական վարդապետի կեանք, ի հարկէ, չէ կարող շատ բազմակողմանի լինել, մանաւանդ որ Ալիշանը ամբողջ երեսուն տարի ապրել է իր խուցի մէջ, չը հեռանալով վանքից: Նա մի քանի անգամ ճանապարհորդել է Եւրոպայում, վարել է տեսչական պաշտօն Ռափայէլեան, ապա եւ Մուրադեան վարժարաններում: Ահա այդ նշանաւոր ծերունու «ցուցակ ծառայութեանը»: Մահացած ժամանակը նա խուցի մէջ աշխատող մի զարմանալի ջանասէր վարդապետ էր: Հետաքրքրականը նրա պաշտօնական ծառայութիւնները չեն, այլ այն նստակեաց կեանքը, որ տասնեակ տարիների ընթացքում այնքան մեծ գրական վաստակներ ստեղծելու հնարաւորութիւն տուեց: Ահա այդ կեանքի վերաբերմամբ կենսագրութիւնը տալիս է մի ամբողջ պատկեր, որի մի քանի կտորները, կարծում ենք, անհետաքրքրական չեն լինի մեր ընթերցողների համար:

Առաջին վայրկենէն որ տեսաւ գիրքը՝ ըմբռնեց անոր օգուտը, կապուեցաւ սրտով անոր հետ, եւ բոլոր կենաց մէջ՝ ամեն պարագաներուն՝ իրեն միակ անբաժան ընկերն եղաւ: Գիրքը եւ գրիչը դիւթական ազդեցութիւն մ'ունէին վրան, եւ կը մոռնար ամեն բան, աշխարհ, կեանք, դիւրութիւն, պատիւ, զբօսանք, եւ այլն.—միակ բացառութիւնը կը կազմէին հոգեւոր եւ կրօնական պարտքերը, որոնց միշտ հաւատարիմ եւ սիրող եղած է, մանաւանդ թէ անոնք առաջին տեղը կը բռնէին իւր մտքին եւ սրտին մէջ: Նոյն էր իրեն համար՝ եթէ Ս. Ղազարու լռիկ խցիկին մէջ գտնուէր, եւ կամ Պարիզի նման բազմադղորդ քաղաքի մէջ, նա նոյնչափ խաղաղիկ՝ իրեն ժամագիրքով եւ գրիչով կը զբաղէր: Իրեն օրը ժամացուցի մ'անուի նման կը դառնային. իւրաքանչիւր վայրկեանը եւ բոպէն՝ իրենց յատուկ պաշտօնը ունէին, որոնք խիստ հարցաքննութեան մը կենթարկուէին օրը լմննալուն: Ինքը, որ իբրեւ բանաստեղծ խոյս պիտի տար միօրինակութենէն, ընդհակառակն չափազանց կանոնաւոր էր իւր օրական գործերու կարգին մէջ: Ամառ ու ձմեռ առաւօտեան ժամը 3-ին, եւ ամենէն ուշ՝ 3½-ին, կելլէր անկողնէն: Զմեռները, ցուրտին ու մութին, ճրագ մը բռնած ձեռքը, փիլոնին ծալքերուն մէջ փաթթուած, գլուխը անցուցած կնդուղը, երագ քայլերով կանցնէր վանքի լռիկ սրահներու միջէն, «Տէր, զի բազումս»-ը մրմնջելով, եւ ժամը 4-ին արդէն եկեղեցին էր, աւանդատան աղօթարանին վրա ծնրադիր, կը պատրաստուէր սուրբ Խորհրդոյն մատուցման: Յետոյ, նոյն ոճով աքեմին մէջ փաթթուած դարձեալ, սենեակը կը դառնար, ուր տասը վայրկենի կամ քառորդի չափ մրափելով անուշիկ մը, ճիշդ սահմանած բոպէին սթափելով կը փութար եկեղեցի, նոյն օրուան յիշատակին կամ տօնելի սուրբերուն վրա համառօտ մտածական մը ընելու, իբր նախապատրաստութիւն ժամերգութեան:

Յետ ժամերգութիւնը վերջանալուն, երկու պատարագ կը տեսնէր, իրեն մտածականը եւ աղօթքները կընէր, որոնցմէ միայն տկարութիւնը կրնար զինքը ազատ ընել, եւ կը դառնար սենեակը կարգաւորելու, եւ անմիջապէս նախաճաշի կիջնար: Առաջին ժամանակները, երբ դեռ տարիները չէին ծանրացած վրան, քալելով կընէր նախաճաշը, —որ ուրիշ բան չէր, բայց սակաւ մը կաթ եւ սուրճ եւ պատառ մը հաց,—լռութեամբ, եւ միայն կտրուկ պատասխան մը տալով՝ եթէ երբէք հարցում մուղղուէր իրեն: Նախաճաշը լմննալուն պէս, եթէ ձմեռ էր՝ սենեակը կելլէր, իսկ միւս երեք եղանակներուն՝ պարտէզ կելլէր, վայելելու գեղեցիկ, արեւոտ, պայծառ երկինքը, խաղաղ լճակը եւ Վենետկոյ մոգիչ տեսարանը: Եւ այդ վայրկեաններն իսկ գիտէր չահեցնել. գրպանէն գրքոյկ մը կը հանէր, եւ այսպէս մերթ դրքին, մերթ բնութեան էջերուն վրա կարդալով խորհրդածելու նիւթեր, կորոճար զանոնք, կընկղմէր սրբազան խոհերու մէջ, եւ կատարելով իրեն շրջանը, կը դառնար սենեակը՝ սկսելու իւր ուսումնական աշխատութիւնները: Սենեակը շատ անշուք եւ պարզ էր, չափաւոր ընդարձակութեամբ, որուն զարդերը կը կազմէին խաչելութիւն մը, քանի մը սրբազան պատկերներ, եւ իրեն կարեւոր գրքերը. նոյնպէս կահկարասին չափազանց անպաճոյճ էր, երկաթ մահճակալ մը, երկու գրադարաններ, գրասեղան մը եւ երկու աղօթարաններ:

Այդ սենեկին մէջ արտադրեց նա իւր բոլոր վիթխարի երկասիրութիւնները, ուր ոչ ոք կերթար զինքը խանգարելու: Այն պատկառանքը՝ զոր կազդէր մեր վրա իւր ներքին տարեթուով, նոյն իսկ ամսաթուով: Նա մի կենդանի հանրագիտական բառարան էր՝ կովկասագիտութեան եւ հայոց պատմութեան վերաբերմամբ, եւ այս բառարանը աննախանձաբար բացվում էր ամեն խնդրողի առաջ: Հարկաւոր էր մէկին զբաղվել Կուր գետի նաւագնացութեան խնդրով—նա դիմում էր Երիցեանին, եւ Երիցեանը մի առ մի յիշում էր այս խնդրին վերաբերեալ գրականութիւնը եւ մի առ մի բերում, այդ գրուածքները շարում էր խնդրողի առաջ: Կամ հետաքրքրվում էր մէկը Լոռու հայ բնակիչների ծագումով—դիմում էր Երիցեանին, եւ Երիցեանը 18-րդ դարից սկսած պատմում էր այդ գաւառի վիճակը, գաղթականութիւնները, յիշում էր, որ գիւղացիք որ գիւղից են գաղթել եւ ի վերջոյ խնդրողի առաջն էր դնում իր ձեռագիր աշխատութիւնը այս հարցի վրա: Նրանից մի տեղեկութիւն խնդրողը՝ հարիւրն էր ստանում, ծանրաբեռնվում տեղեկութիւններով, ապշելով Երիցեանի անսովոր յիշողութեան վրա եւ ցանկանալով մի ֆոնոգրաֆ դառնալ նրա պատմածները անմոռանալի կերպով մտքում տպաւորելու համար: Նա սիրում էր խօսել. նրա խօսակցութեան առարկան սակայն օրվայ խնդիրները չէին. նա պատմում էր սովորաբար անցեալից. «անցեալից»՝ ըստ մեր հասկացողութեան: Երիցեանի համար «անցեալը» հինգերորդից մինչեւ տասնեւութերորդ դարն էր, «ներկան»՝ տասնեւութերորդ դարը եւ տասնեւիններորդի առաջին կէսը. «նորագոյն ժամանակը»՝ մինչեւ 1860 թուականը. այդ ժամանակից այս կողմը, իբրեւ պատմութեան նիւթ՝ Երիցեանի արհամարհանքն էր շարժում: Այդտեղ կային միայն յիշողութիւններ — ռուս-թիւրքական պատերազմից, Գալ. Շերմազանեանի ժամանակ պատահած խռովութիւնից, հնագիտական ժողովի գործունէութիւնից, ճանապարհորդութիւններից եւ այլն: Եւ երբ նա պատմում էր կամ յիշողութիւնները վերարտադրում, պատմուածքը համեմելով հանաքներով, զուարճալի անեկդոտներով (դարձեալ պատմական բովանդակութեամբ), լսողին թւում էր, թէ դասախօսութիւններ է լսում, շատ հետաքրքրական դասախօսութիւններ:

Մեզ պակասեց ահա այս կենդանի աղբիւրը՝ հայոց հնագիտութեան պատմութեան եւ առհասարակ կովկասագիտութեան վերաբերմամբ: Ո՞ւմ պէտք է դիմէ այսուհետեւ պարապողը՝ տեղեկութիւններ հարցնելու, աղբիւրներ փընտռելու. ումից պէտք է նա խնդրէ փարատել տարակոյսը որ եւ է պատմական, հնագիտական հարցի վերաբերմամբ:—Չը կայ Երիցեանը, չը կայ մէկը նրան փոխարինող: Երիցեանի թողած պարապ տեղը, պատառուածքը շատ զգալի է:

Այս հմտութիւնը, որը չեմ կարող առանց հիացմունքի յիշել, հարկաւ հեշտութեամբ չէր ձեռք բերել Ալ. Երիցեանը: Քառասուն երկար տարիներ՝ նա գիշերներ է լուսացրել գրքեր կարդալով, դօկումենտներ քրքրելով, ցուցակագրելով, կարգի դնելով: Իրան հետաքրքրող առարկաների մասին որ եւ է գիրք կամ դօկումենտ նա ձեռք կը բերէր՝ առանց միջոցներ խնայելու, չը նայելով որ միջոցներն էլ շատ սուղ էին: Եւ ձեռք բերածը նախ քան գրադարանի թարաքը դնելը, կամ հաւաքածուների շարքում ըստ պատշաճին տեղաւորելը՝ դեռ կարդում, ամբարում էր իր ուղեղում: Նրա գրադարանը պարունակում էր 5,200 անուն հայերէն գիրք, նոյնքան՝ ռուսերէն լեզուով, (օտար լեզուներով գրքերը չեմ յիշում, որովհետեւ հանգուցեալը ուրիշ լեզուներով կարդալ չը գիտէր), 16,000 կտոր դօկումենտներ, մեծ մասամբ կոնդակներ եւ պաշտօնական գրագրութիւններ, 150 ձեռագիր. թողնում եմ յիշել բազմաթիւ առանձին ժողովածուները՝ պարբերական հրատարակութիւնների, օրացոյցների, լուսանկարների, թատրօնական աֆիշների, նշանաւոր ճաշկերոյթների մէնիւների եւ այլն: Եւ այս հազարաւոր մեծ ու փոքր գրքերն ու դօկումենտները նա կարդացել եւ ուսումնասիրել է այնպիսի հետաքրքրութեամբ ու սիրով, ինչպէս մարդ կարդում է սիրած հեղինակի հետաքրքրաշարժ վէպը: Նա չէր կարդում վէպ ու բանաստեղծութիւն, առհասարակ ծաղրում էր գեղեցիկ գրականութիւնը: Բայց եթէ ձեռքն անցնէր մի պատառ՝ ասենք Ներսէս կաթողիկոսի կոնդակից (որից մի քանի հազար հատ ունէր)՝ նա անմիջապէս ցաւող, արտասուակալ աչքին կը դնէր ակնոցը, կը կարդար այդ ըժուարընթեռնելի պատառիկը, դիմելով երբեմն խոշորացոյցի օգնութեան, կը համեմատէր ուրնեցած դօկումենտների հետ, կը մտցնէր դօկումենտների ցուցակի մէջ, կը դնէր համապատասխան ժողովածուի մէջ, եւ երջանիկ ու հարուստ էր Երիցեանը այդ օրը, թէկուզ վաղը ուտելիք էլ չունենար: Եւ ինչէր ասէք չէր կարդում նա՝ հայոց պատմութեան վերաբերեալ նիւթեր փնտռելով: Հէնց այս ձմեռ, հիւանդութեան միջոցին, նա կարդում էր Պետրոս Մեծի նամակագրութիւնների խոշոր մի հատորը, ռուսաց առածների ու ասացուածքների ընդարձակ ժողովածուն, Կիեվի Պեչօրեան հռչակաւոր վանքի տարեգրութիւնները, եւ այլն—հայոց վերաբերեալ նիւթեր գտնելու համար: Կողմնակի դիտողը կը սարսափէր ու կափսոսար՝ ինչպէս եթէ տեսնելու լինէր մի մարդու, որ ոսկի դրամներ գտնելու յուսով սուզվելիս լինի ծովի անդունդները: Եւ նա, երեւակայեցէք, գտնում էր այս բոլորի մէջ նիւթեր, գրանում էր եւ օգտվում նրանցից:

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԻՑԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Որ եւ է մարդու ամբողջ նշանակութիւնն ամենից սուր կերպով զգացվում է նրա մահվան միջոցին: Ամեն կենդանի մարդ մի յայտնի չափով մասնակցութիւն ունի կեանքի եւ գրականութեան ընթացքի մէջ. բոլորի համաժամանակ գործունէութիւնը, մեծ կամ փոքր, միարան կամ հակառակ, կազմում է կեանքի ու գրականութեան խիստ բարդ երեւոյթը: Երբ գործիչ ոյժերից մէկը կամ միւսը վերանում է մէջտեղից՝ այն ժամանակ մի որոշ տեղ պարապ է մնում, մի յայտնի պատառուածք է առաջ գալիս:

Կորցրինք Ա. Երիցեանին: Սա նշանակում է, որ մեր պատմագրական գրականութեան մէջ բացվեց մի մեծ պարապ տեղ: Նա ամենահրատուն անձն էր արեւելեան հայոց 18-րդ եւ 19-րդ դարերի պատմութեան. այս դարերում տարող նշանաւոր, նոյն իսկ երկրորդական անձնաւորութիւններն ու նրանց գործերը գիտէր այնպիսի մանրամասնութեամբ, որ կարծես նրանք իր անձնական ծանօթները լինէին: Անգրկովկասը իր տեղագրութեամբ, հնութիւններով, չէներով ու աւերակներով, բնակած ազգութիւններով նա գեղեցիկ ճանաչում էր: Հազարաւոր գրագրութիւնները, որ անցեալ եւ նախանցեալ դարերում կատարվել են բարձրագոյն հոգեւորականների մէջ, պետութեան զանազան վարչութիւնների գրութիւնները հայոց վերաբերեալ, այս կամ այն անձի մասին գրված մենագրութիւնները—բոլորը նա յիշում էր տարեթուով, նոյն իսկ ամսաթուով: Նա մի կենդանի հանրագիտական բառարան էր՝ կովկասագիտութեան եւ հայոց պատմութեան վերաբերմամբ, եւ այս բառարանը աննախանձաբար բացվում էր ամեն խնդրողի առաջ: Հարկաւոր էր մէկին զբաղվել Կուր գետի նաւագնացութեան խնդրով—նա դիմում էր Երիցեանին, եւ Երիցեանը մի առ մի յիշում էր այս խնդրին վերաբերեալ գրականութիւնը եւ մի առ մի բերում, այդ գրուածքները շարում էր խնդրողի առաջ: Կամ հետաքրքրվում էր մէկը Լոռու հայ բնակիչների ծագումով—դիմում էր Երիցեանին, եւ Երիցեանը 18-րդ դարից սկսած պատմում էր այդ գաւառի վիճակը, գաղթականութիւնները, յիշում էր, որ գիւղացիք որ գիւղից են գաղթել եւ ի վերջոյ խնդրողի առաջն էր դնում իր ձեռագիր աշխատութիւնը այս հարցի վրա: Նրանից մի տեղեկութիւն խնդրողը՝ հարիւրն էր ստանում, ծանրաբեռնվում տեղեկութիւններով, ապշելով Երիցեանի անսովոր յիշողութեան վրա եւ ցանկանալով մի ֆոնոգրաֆ դառնալ նրա պատմածները անմոռանալի կերպով մտքում տպաւորելու համար: Նա սիրում էր խօսել. նրա խօսակցութեան առարկան սակայն օրվայ խնդիրները չէին. նա պատմում էր սովորաբար անցեալից. «անցեալից»՝ ըստ մեր հասկացողութեան: Երիցեանի համար «անցեալը» հինգերորդից մինչեւ տասնեւութերորդ դարն էր, «ներկան»՝ տասնեւութերորդ դարը եւ տասնեւիններորդի առաջին կէսը. «նորագոյն ժամանակը»՝ մինչեւ 1860 թուականը. այդ ժամանակից այս կողմը, իբրեւ պատմութեան նիւթ՝ Երիցեանի արհամարհանքն էր շարժում: Այդտեղ կային միայն յիշողութիւններ — ռուս-թիւրքական պատերազմից, Գալ. Շերմազանեանի ժամանակ պատահած խռովութիւնից, հնագիտական ժողովի գործունէութիւնից, ճանապարհորդութիւններից եւ այլն: Եւ երբ նա պատմում էր կամ յիշողութիւնները վերարտադրում, պատմուածքը համեմելով հանաքներով, զուարճալի անեկդոտներով (դարձեալ պատմական բովանդակութեամբ), լսողին թւում էր, թէ դասախօսութիւններ է լսում, շատ հետաքրքրական դասախօսութիւններ:

Մեզ պակասեց ահա այս կենդանի աղբիւրը՝ հայոց հնագիտութեան պատմութեան եւ առհասարակ կովկասագիտութեան վերաբերմամբ: Ո՞ւմ պէտք է դիմէ այսուհետեւ պարապողը՝ տեղեկութիւններ հարցնելու, աղբիւրներ փընտռելու. ումից պէտք է նա խնդրէ փարատել տարակոյսը որ եւ է պատմական, հնագիտական հարցի վերաբերմամբ:—Չը կայ Երիցեանը, չը կայ մէկը նրան փոխարինող: Երիցեանի թողած պարապ տեղը, պատառուածքը շատ զգալի է:

Այս հմտութիւնը, որը չեմ կարող առանց հիացմունքի յիշել, հարկաւ հեշտութեամբ չէր ձեռք բերել Ալ. Երիցեանը: Քառասուն երկար տարիներ՝ նա գիշերներ է լուսացրել գրքեր կարդալով, դօկումենտներ քրքրելով, ցուցակագրելով, կարգի դնելով: Իրան հետաքրքրող առարկաների մասին որ եւ է գիրք կամ դօկումենտ նա ձեռք կը բերէր՝ առանց միջոցներ խնայելու, չը նայելով որ միջոցներն էլ շատ սուղ էին: Եւ ձեռք բերածը նախ քան գրադարանի թարաքը դնելը, կամ հաւաքածուների շարքում ըստ պատշաճին տեղաւորելը՝ դեռ կարդում, ամբարում էր իր ուղեղում: Նրա գրադարանը պարունակում էր 5,200 անուն հայերէն գիրք, նոյնքան՝ ռուսերէն լեզուով, (օտար լեզուներով գրքերը չեմ յիշում, որովհետեւ հանգուցեալը ուրիշ լեզուներով կարդալ չը գիտէր), 16,000 կտոր դօկումենտներ, մեծ մասամբ կոնդակներ եւ պաշտօնական գրագրութիւններ, 150 ձեռագիր. թողնում եմ յիշել բազմաթիւ առանձին ժողովածուները՝ պարբերական հրատարակութիւնների, օրացոյցների, լուսանկարների, թատրօնական աֆիշների, նշանաւոր ճաշկերոյթների մէնիւների եւ այլն: Եւ այս հազարաւոր մեծ ու փոքր գրքերն ու դօկումենտները նա կարդացել եւ ուսումնասիրել է այնպիսի հետաքրքրութեամբ ու սիրով, ինչպէս մարդ կարդում է սիրած հեղինակի հետաքրքրաշարժ վէպը: Նա չէր կարդում վէպ ու բանաստեղծութիւն, առհասարակ ծաղրում էր գեղեցիկ գրականութիւնը: Բայց եթէ ձեռքն անցնէր մի պատառ՝ ասենք Ներսէս կաթողիկոսի կոնդակից (որից մի քանի հազար հատ ունէր)՝ նա անմիջապէս ցաւող, արտասուակալ աչքին կը դնէր ակնոցը, կը կարդար այդ ըժուարընթեռնելի պատառիկը, դիմելով երբեմն խոշորացոյցի օգնութեան, կը համեմատէր ուրնեցած դօկումենտների հետ, կը մտցնէր դօկումենտների ցուցակի մէջ, կը դնէր համապատասխան ժողովածուի մէջ, եւ երջանիկ ու հարուստ էր Երիցեանը այդ օրը, թէկուզ վաղը ուտելիք էլ չունենար: Եւ ինչէր ասէք չէր կարդում նա՝ հայոց պատմութեան վերաբերեալ նիւթեր փնտռելով: Հէնց այս ձմեռ, հիւանդութեան միջոցին, նա կարդում էր Պետրոս Մեծի նամակագրութիւնների խոշոր մի հատորը, ռուսաց առածների ու ասացուածքների ընդարձակ ժողովածուն, Կիեվի Պեչօրեան հռչակաւոր վանքի տարեգրութիւնները, եւ այլն—հայոց վերաբերեալ նիւթեր գտնելու համար: Կողմնակի դիտողը կը սարսափէր ու կափսոսար՝ ինչպէս եթէ տեսնելու լինէր մի մարդու, որ ոսկի դրամներ գտնելու յուսով սուզվելիս լինի ծովի անդունդները: Եւ նա, երեւակայեցէք, գտնում էր այս բոլորի մէջ նիւթեր, գրանում էր եւ օգտվում նրանցից:

(Կը շարունակվի)

կայութեամբ, կարգելուր զմեզ յախուռն մօտենալ իրեն. այնքան թանկ էին իրեն վայրկեանները մեր աչքին։ Բայց այսու՝ չկարծուի թէ անմատչելի մէկն էր նա. ընդհակառակն, ընտանի, կարեկցող, զիջանող՝ մանաւանդ կրտսերագունից, կատարելով սիրակամ ինչ ինդիրք որ ըլլար իրեն։

Ամառ ու ձմեռ, երբ կը ներէր օդը, առաւօտեան ժամը 10½-ին կամ 11-ին միջոցները, ձեռքը գրքոյկ մը, գլուխը սպիտակ թաշկինակով մը ծածկած, կը շրջագայէր պարտիզին մէջ։

Միտքը՝ կազդուրուած, սիրտը՝ թարմացած, զգացումներով ողողուն, կառանձնանար սենեակը, եւ թոյլ կու տար որ սահի գրիչը թուղթին վրա եւ հասցունէ մեզի Սիսուանի, Այրարատի նման գոհարներ։

Միջօրէին մօտ, փիլոնը ձախ թեւին վրա առած, աճապարանքով կը վազէր եկեղեցի. տեսնողը պիտի կարծէր՝ թէ ուշ մնացեր է եւ կուզէ ժամերգութեան հասնիլ. եւ սակայն քառորդ կամ տասը վայրկեան կայ դեռ ժամերգութիւնը սկսելու, եւ նա գիտէր շահեցնել գերազանցապէս այդ վայրկեանները, զորս ուրիշ մը կորսուած վայրկեաններ պիտի համարէր։

Ցեռ ճաշուն, դարձեալ պարտէզ կելնէր, եւ ընդհանրապէս ամառները Զիթենեաց պարտէզ կոչուած փոքրիկ հողատափին վրա կը մեկուսանար, ուր անգլիացի մեծ բանաստեղծին տնկած ձիթենիներուն ոստերէն ուռճացած միակ ձիթենւոյն շուքին տակը նստած, կարդալով եւ մտածելով կանցունէր իրեն հանգստի ժամը։ Երբ ժամացոյցը երկուք կըլլար, իրեն ուսումնական աշխատութեանց ժամն ալ կը հնչէր. կը փութար սենեակը, եւ ինչ որ կարդացեր կամ հաւաքեր էր՝ թուղթի վրա կառնուր, իրեն մտածութեանց եւ զգացումներուն գոյները եւ ձեւերը տալով անոնց։ Ամառուան ամենէն տաք եղանակին,—որ չարչարուելու եղանակն էր իրեն,—թմրութիւն մը զգալով՝ քանի մը վայրկեան կը մրափէր թիկնաթոռին վրա, եւ յետոյ սթափելով՝ կը շարունակէր իրեն գրութիւնը մինչեւ երեկոյեան ժամերգութեան մօտենալը։ Ցեռ ժամերգութեան եւ մտածականին՝ դարձեալ խցիկը կառանձնանար, եղանակին համեմատ բաժնելով այն երկու ժամերը, կէսը՝ գրաւոր աշխատութեան եւ կէսն ալ հոգեւորի նուիրելով։ Եւ այսպէս՝ հոգեւորով կը սկսէր եւ հոգեւորով կը փակէր օրը։

Ընթրիքէն վերջը Ձեմարան կոչուած ընթերցարանը կերթար, ուր կը խմբուին ընդհանրապէս քահանայք, եւ կը գտնուին հոն կարեւոր գրեանք եւ ուսումնական թերթեր։ Նա, աչքերը կիսափակ եւ ձեռները իրարու ագուցած, վերուվար կը քալէր, կը մտանակցէր մերթ ընդ մերթ ուսումնական խօսակցութեանց կամ խնդիրներուն, եւ կը յայտնէր հաճեստօրէն իրեն կարծիքը։ Ժամը 9-ը հնչելուն՝ կը քաշուէր սենեակը, եւ երեկոյեան աղօթքները եւ մտածականն ընելով, որ մէկ ժամէն պակաս չէր տեւեր, հանգիստ կու տար խոնջ մտքին եւ մարմնոյն։

Այս էր ահա օրական կեանքը այն մեծ մարդուն, որ իրեն կանոնաւորութեամբ գիտցաւ շահեցնել եւ կրկնապատկել ժամանակը։ Նա այնչափ ճիշդ էր այս ժամակարգին, որ գիտէինք թէ ուր եւ ինչ բանով զբաղած էր իւրաքանչիւր ժամերուն, եւ երբէք, երբէք չէինք սխալեր մեր այս հաշուին մէջ։ Այսպէս անցուց նա իւր կենաց վերջին երեսուն տարին, որ մնաց անընդհատ Ս. Ղազարու կղզեկին մէջ։

Նա շատ քիչ անգամ ոտքը դուրս կը դնէր Ս. Ղազարու կղզեկէն, հազիւ ութ՝ տասը անգամ ամբողջ տարւոյն մէջ, այն ալ իրեն հոգեւոր որդիքը գոհացնելու համար։ Քաղաքին մէջ գրեթէ աչքերը գոց կը քալէր, վարժած ըլլալով այնպէս քալելու վանքի սրահներուն մէջ. բարեբախտաբար Վենետկոյ դիրքը կը ներէր այդ, չի գտնուելով հոն կառք, ձի, եւ այլն։ Այդ ալեւոր ծերունին, երբ հովին տուած սպիտակ մազերը՝ որոնք կը ծածանէին գլխուն շուրջը, կանցնէր Ս. Մարկոսի հրապարակին միջէն ամփոփ եւ երագ քալուածքով, առանց ակնարկ մ՚անգամ ձգելու երկու կողմը կանգնած չքեղ պալատներուն, ճոխութեան եւ արուեստի հրաշակերտներուն, կը գրաւէր ամենուն ուշը, մանաւանդ օտարականներուն։ Սակաւապէտ էր ուտելեաց, եւ քունի մէջ. ամառ՝ ձմեռ հազիւ 5½ ժամ կը քնանար։ Իւր ամէն ծառայութիւնները ինքը անձամբ կընէր, նոյն իսկ խոր ծերութեան ժամանակ. մինչեւ վերջին օրը ինքը կաւլէր սենեակը, ինքը կը շտկէր անկողինը։ Տանջանք մ՚էր իրեն՝ տեսնել որ ուրիշները իրեն համար կաշխատէին կամ նեղութիւն մը կը կրէին։ Ինքը որ անհուն գորովանք մունէր մեր ամենուս վրա, կը նեղուէր՝ երբ մենք փոխադարձաբար նոյնը ցուցնէինք իրեն։ Զատ զանց մտադիր էր պատշաճութեան կանոններուն, որոնց մէջ չէր պակսեր երբէք նոյն իսկ դէպ ի ամենէն փոքրը։ Միշտ պատրաստ ունէր բերնին մէջ անուշ, մխիթարիչ եւ յարմար խօսք մը իրեն կրօնակից եղբայրներուն։ Ինպէս գրիչը, այսպէս եւ լեզուն՝ ունէր յատուկ ճկուն դարձուած մը, որով ուրիշներուն չը համարձակած ըսելիքը, ինքը առանց վիրաւորելու կըսէր։ Ազգային հիւրերէն շատերը, որոնք համբաւով միայն կը ճանչնային հ. Ալիշանը, Ս. Ղազար կու գային յատկապէս զինքը տեսնելու։ Երբ կիմանար ինքը թէ ազգայիններ եկեր էին, անմիջապէս կը թողուր աշխատութիւնը եւ կերթար իրը սովորական հիւրընկալ մը ընկերանալու անոնց, առանց ինքզինքը ծանօթացնելու։ Երբ հիւրերը փափաք կը յայտնէին հ. Ալիշանին տեսնակը երթալու եւ աչը համբուրելու, կը հասկցնէր ինքը՝ թէ ինչ պիտի ընէին այնպիսի զառամեալ ծերունի մը տեսնելով։ Երբ կը վերջացնէին տեսնելու իրերը եւ պիտի մեկնէին վանքէն, եւ կը կրկնէին դարձեալ իրենց խնդիրքը, այն ժամանակ ժպտելով կըսէր. «Արդէն տեսաք զինքը»։ Անկարագրելի է անոնց զարմանքը, ապշութիւնը, երբ կը մըտածէին թէ այն համեստ ծերունին է եղեր հ. Ալիշանը, եւ կը ցաւէին թէ ինչպէս չէին կրցած պէտք եղած մտադրութիւնը ընել՝ այնպիսի մեծ մարդու մը ընկերութիւնը վայելելու պահուն։ Ոչ սակաւ անգամ պատահած է այս դէպքս, որ կը ցուցնէ անոր կարդ դուրս համեստութիւնը։

Աւելորդ է ասել, որ միայն Ս. Ղազարի բարեկարգ վանքը կարող էր այսքան յարմարութիւններ տալ մեծագործ ծերունուն։ Այդ յարմարութիւնները շատ կարեւոր գործօններ են. յաճախ պատահում է, որ խոշոր տաղանդները կորչում, անհետանում են անպտուղ, ճնշված անյարմարութիւնների եւ վատ հանգամանքների ծանրութեան տակ։ Մխիթարի հիմնած վանքը հէնց նրանով է նշանաւոր, որ ամեն տեսակ յարմարութիւն է տալիս գրքի եւ գրչի այնպիսի սիրահարներին, որոնցից մէկը եւ գուցէ ամենամեծը Հ. Ալիշանն էր։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Մեծ-Ղարաքիլիսայից՝ 113 ռուբլի 50 կոպէկ, որ ժողովել է Երուանդ Յակովբեան հետեւեալ անձերից. Խ. Աբովեան 25 ր., Ց. Նալբանդեան 10 ր., Ն. Նաղարէթեան 5 ր., Խ. Տէր-Սիմէօնեան 3 ր., Ե. Նալբանդեան 5 ր., Բ. Նալբանդեան 3 ր., Մ. Ցարութիւնեան 3 ր., Ց. Աղաբաբեան 3 ր., Ա. Աղաբաբեան 1 ր. 50 կ., Ս. Փիրոյեան 3 ր., Մ. Աղաբաբեան 1 ր., Կ. Աբովեան 1 ր., Զ. Աբովեան 1 ր., Հ. Աղաբաբեան 1 ր., Տ. Յակովբեան 1 ր., Դ. Սէֆեան 2 ր., Ա. Բոտանով 1 ր., Ա. Խաչատուրեան 1 ր., Ս. Տէր-Սարգսեան 2 ր., Գ. Պետրոսեան 5 ր., Կ. Ցարութիւնեան 2 ր., Դանդուրով 1 ր., Ս. Հողափեան 1 ր., Ա. Մկրտումեան 1 ր., Ա. Աբրահամեան 1 ր., Ա. Զալիեան 3 ր., N, 1 ր., Գասպարեան 2 ր., Մ. Ցարութիւնեան 1 ր., Մ. Ասլանեան 2 ր., Ա. Թումանեան 5 ր., Ն. Մէլիք-Դաղաեան 1 ր., Գ. Յակովբեան 2 ր., Մ. Նարինեան 3 ր., Մաշադի-Բաջաբով 3 ր., Հ. 50 կ., Ա. Բաբաեվ 2 ր., Ջամբо 3 ր.։ Գումարն է 52 ր. 50 կ.։

Պեսարիգօրսկից, Աբրահամ քահանայ Շիլինեանից, 95 ր., որ նա ժողովել է հետեւեալ անձերից՝ Գ. Մանդալեան 25 ր., Տ. Կ. Վեքիլեան 2 ր., Վ. Սեֆերեան 5 ր., Մ. Պչախչեան 1 ր., Ս. Նաւասարդեան 1 ր., Բ. Խոջայեան 10 ր., Գ. Մուրադեան 1 ր., Պ. Քիւրքչի 3 ր., Գ. Դոննիկեան 1 ր., Տ. Զերնեան 1 ր., Ն. Ռոստովանեան 1 ր., Ա. Սարգսեան 1 ր., Մ. Նացվալեան 1 ր., Մ. Ազիզեան 50 կ., Ս. Շորշորեան 1 ր., Ս. Կոստապրաւեան 1 ր., Ա. Խանդամեան 1 ր., Մ. Ասլամազեան 1 ր., Վ. Ասլամազեան 1 ր., Կ. Սինայեան 1 ր., Ց. Խիթարեան 1 ր., Ռ. Խասաբեան 2 ր., Ա. Մելիք-Սարգսեան 5 ր., Մ. Գարագաշեան 1 ր., Ց. Կալենտիկեան 2 ր., Ց. Աթամանեան 2 ր., Ց. Գալստեան 5 ր., Բժ. Ռ. Գանջումեան 1 ր., Դ. Փարեմուզեան 3 ր., Վ. Սուքիասեան 1 ր., Ց. Խաղիզեան 3 ր., Ս. Ցարութիւնեան 1 ր., Տիկ. Ց. Տէր-Ցովակիմեան 4 ր., Զ. Մելիք-Ամիրզաղեան 3 ր., Ա. Ք. Շիլինեան 1 ր. 50 կ.։ Գումարն է 95 ռուբլի։

Ընդամենը 261 ր., իսկ նախկին ստացվածների հետ միասին 3754 ր. 3 կ.։

ՄԻ ԿՕՆՑԵՐՏ ԷԼ

Շաբաթ, փետրվարի 23-ին, ցերեկվայ ժամը 12-ին, վրաց ազնուականների թատրոնում կայացաւ հայոց խմբական կօնցերտ, ինչպէս աֆիշներում յայտարարված էր՝ ...«Կը կայանայ Թիֆլիսում հայոց բեմի վրա առաջին անգամ օրկէստրով, մասնակցութեամբ սիրողների հայկական խառն խմբի» (որ նշանակում է քառաձայն խմբի), ղեկավարութեամբ Ս. Դ. Մարտիրոսեանի»։

Ս. Դ. Մարտիրոսեան մի շատ ջահել պարոն է, որ սովորելով Ռուսաստանի կօնսէրվատորիայում 3—4 ամիս՝ նիւթականի պակասութեան պատճառով եկել է հայրենիք, կրկին վերադառնալու մտադրութեամբ։ Պարոնին հարկաւոր է ամեն կերպ օգնել, որ ուսմունքը շարունակէ, վերջացնէ եւ ասպարէզ դուրս գայ։

Ինչ վերաբերում է կօնցէրտին, նա նոր ոչինչ չը ներկայացրեց. ծրագրի «Բամ...», «Էջմիածին», «Կռունկ», «Հաւատիք», «Առաւօտեան», «Երազ», «Զան գիւլ.», «Զարթիր», «Մայր Արաքսի», «Արեւ ծագեց», «Спи младенецъ» եւ «Եօթն օր» երգերը 1885 թուականին Արծրունու թատրոնում դրել եմ ես բեմի վրա քառաձայն եւ այն օրից ամեն տարի կրկնվում են թէ Թիֆլիսում եւ թէ գաւառներում։ Խմբում մասնակցող սիրողների մեծ մասը ցուցահանդէսի խմբից էին։ Երգերի ներդաշնակութիւնը իմ գրածն է, որն անփոփոխ բեմ էր դրված։ Մնում է օրկէստրը։ Այս թատրոնի օրկէստրը ինքն ըստ ինքեան մի շատ փոքր խումբ է, որի մէջ չը կան մինչեւ անգամ բոլոր անհրաժեշտ գործիքները։ Նա կարող է նուագել անտրակտներում իր վարժ պիէսները։ Իսկ երգերի հետ նուագելու մեծ պատրաստութիւն է հարկաւոր։

Ինչու՞ է պ. կօնցէրտանտը «օրկեստրով կօնցերտ հայ բեմի վրա Թիֆլիսում տոաջին անգամ» գրում։ Մինթէ հայոց բեմը գոյութիւն ունի միմիայն 10—15 տարի։ Մենք տեսել ենք հայ բեմի 30-ամեակը, նա դեռ աւելի եւս հին է։ Եւ այդ ժամանակի ընթացքում Թիֆլիսի հասարակութիւնը լսել է օրկէստրով հայոց կօնցէրտը 1879, 1880 եւ 1881 թուերին, Կ. Պոլսի դերասանական խմբի այստեղ եղած ժամանակ, նմանապէս իմ ներկայացրած երգերը օրկէստրով Արծրունու թատրոնում 1882 թուականին։ Այս բոլորը կարելի կը լինէր համարել ոչինչ, եթէ հինը նոր լինէր, նորոգված լինէր աւելի լաւ ոյժերով, անհամեմատ բարձր գիտութեամբ, բազմաչխատ վարժ փորձառութեամբ, աւելի մեծ եռանդով եւ նոր ճաշակով ու վառ ֆանտազիայով։ Ապա թէ ոչ ինչ միտք ունի բեմ դուրս գալ հին եւ հնից էլ մի բան պակաս ձեւով։ Հնից էլ մի բան պակաս եմ ասում, որովհետեւ ես դեռ չեմ լսել այսպիսի թերի կազմված խմբի այսքան անաջող երգեցողութիւն։

Վարագոյրը բացվեց, խումբը սկսեց երգել «Մեր հայրենիք» օրկէստրի նուագածութեամբ։ Երգի առաջին բառից մինչեւ վերջը լսվում էր միմիայն երկրորդ ձայնը, կարելի է որ եթէ օրկէստրը չը լինէր՝ մի քիչ լսվէին եւ միւս ձայները, բայց ներկայ պայմանին տիրապետում էր երկրորդ ձայնը։ Շատ հասկանալի է. խումբը բաղկացած էր մօտ 20—30 հոգուց եւ նրա մէջ առաջի կանանց ձայները չորս հոգի էին եւ այն էլ մի տիկին այնքան ծուռ էր կանգնել, որ նրա ձայնը պէտք է գնար կուլիսների ետեւը եւ ոչ դահլիճը, երկրորդ ձայնը կազմում էին տղայ-պատանները։ Մի՞ւս երգերը մի քիչ ուժեղ երգեցին, խումբը ոգեւորված էր երեւում, բայց տակտին չը հետեւելու պատճառով օրկէստրից առաջ էր վազում։

Երգերը քառաձայն բեմ դնելու ձեւերի մէջ մեծ զգուշութիւն է հարկաւոր. օր. աւելի լաւ է միաձայն երգել, քան վատ քառաձայն։ Աւելի լաւ է քառաձայն առանց դաշնամուրի երգել, քան դաշնամուրի վատ ներդաշնակութեամբ։ Նմանապէս աւելի լաւ է քառաձայն դաշնամուրով երգել, քան օրկեստրով, որը համապատասխան չէ խմբին ոչ ներդաշնակութեամբ եւ ոչ իր նուագելու կատարելութեամբը։

Շատ ուրախալի է, որ նոր սերունդի երիտասարդները նուիրում են իրանց հայերէն երգերի. ողջունում ենք պ. Մարտիրոսեանին. բայց ցանկալի կը լինէր, որ այդ երիտասարդները ասպարէզ դուրս գային առաջին անգամից լաւ ոյժերով եւ հմտութեամբ։ Իսկ հասարակական գործը թերի կատարելը չէ կարող արդարացնել ոչ մի հանգամանք եւ ոչ իսկ կարիքը, թէպէտ սրա առաջ խոնարհվում է ամեն ոք։

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Փետրվարի 18-ին

Քաղաքում թուրք եւ քրիստոնեայ ժողովրդի շրջաններում փոխադարձ խուլ տրտունջ է տիրում—տառապեալներին նպաստ բաժանելու վերաբերմամբ, թէ իբր այս կամ այն կողմին աւելի կամ պակաս է տրվում։ Բայց կողմերի կարծիքները եւ տրտունջները մի կողմ թողնելով, մէջ բերեմ իբրեւ ապացոյց չատերից միայն երկու փաստ, որպէս զի տուժող կողմերեւայ եւ զանգատների արդարութիւնը որոշվի։

Գործի սկզբում հացի սայլերը, երբ անցնում էին ներքեւի բազարով, դեռ քրիստոնեաների թաղին չը հասած, ամբոխը սայլերի միջից սկսեց թալանել հացը։ Դա քաղցի դէմ բացվող կռիւ չէր, այլ լոկ անկարգութիւն, ամբոխի վայրենութիւններից մէկը։ Այդ անկարգութիւնից յետոյ սայլերը քաղաք էին մտնում կօզակների ուղեկցութեամբ։ Այնուհետեւ ստացվող հացի 1/9 բաժինը միայն քրիստոնեաների բաժին տալուց յետոյ, մնացածը ուղարկվում էր թուրքերի թաղը. առաջիններից բաժին էին տանում վերին թաղի բոլոր թուրք ծառայողները եւ խանութպաններն էլ։—Մի ծիծաղելի մի եւ նոյն ժամանակ յուզող դէպք տեղի ունեցաւ իմ աչքի առաջ քրիստոնեաներին հաց բաժանելիս. երբ հինգ բօպէով հացով լի պարկը պահ էի տուել իբր կարգ պահպանող թուրք ոստիկանին եւ ես հեռացել գործով, աչքդ բարին տեսնէ, վերադառնում եմ եւ տեսնում եմ պահապանս պարկը չալակած փախչում է։ Ստիպված էի ետեւից հասնել եւ խայտառակելով խլել։ Ուրեմն մէջ բերած օրինակներիցս երեւում է, որ ոչ այնքան իսկապէս կարիք ունեցողներ օգտվում, որքան անարեւս, անպատկառները։ Ազնուաբարոյ դասակարգը համեմատաբար կը բողոքվին տուժում է։

Որպէս զի ապագայում նորանոր անախորժութիւններ չը գոյանան, նպատակայարմար կը լինէր, եթէ ստացված իրերը բաժանվէին երկու կամ չորս մասի, որից մէկ մասը հայերի եւ ռուսների, իսկ մնացածը թուրքերի մէջ բաժանվէին։ Այդպիսով համ տրտունջ չէր գոյանար, համ էլ բաժանումը կը լինէր արդարացի։ Այս օրինակ գործելու մեր մի անգամ արած առաջարկութեան, կոմիտէի անդամներն էլ հաւանութիւն տուին։ Բայց ինչու՞ չիրագործվեց հաւանութիւն ստացած կարծիքը, որի շնորհիւ ահա ժողովրդի մէջ, տեղի թէ անտեղի, կարծիքներ, բացատրութիւններ են պատում։ Մենք հաւատացած ենք, որ հարցը սկզբունքով մի անգամ վճռելուց եւ չափ ու սահմանի մէջ դնելուց յետոյ, ժողովուրդն էլ ոչ մի դժգոհութեան պատճառ չի ունենայ։ Այդ բոլորը այնպէս լինելուց յետոյ, ով կերաշխաւորէ, որ դրամական օժանդակութիւնն էլ այդպէս կարող լինել։ Ահա այդպիսի հանգամանքներ է, որ առաջանում են խուլ կամ ակնյայտ տրտունջներ։ Եւ վերջապէս ինչու՞ բախտի գործը յանուն արդարութեան կարգի տակ չ դնել. այդ պարտքը, մենք կարծում ենք, տեղին յանձնաժողովի գործն է։ Քրիստոնէի եւ թուրքի այս դէպքում բաժանման հարցը հարկաւոր չէր յիշել անգամ, եթէ նրանք իրանց թաղերով իսկ բաժանված չը լինէին. այնպէս որ այդ բանի կարեւորութիւնը նոյն ինքը քաղաքի յարմարութիւնն է ցոյց տալիս մեզ։

Ինչ էլ որ լինի, մխիթարիչ է հէնց այն երեւոյթը, որ ընդհանուր աղէտի այսպիսի մի ժամանակում մեր երկրի երկու նշանաւոր ցեղերը, այստեղ եւ դրսում, գործում են ձեռք ձեռքի տուած համերաշխութեամբ, եւ ջանք պիտի գործ դնել մանր-մունր խորդուբորդութիւնները ուղղել։ Աւելի մխիթարիչ է քաղաքային աւագի պաշտօնակատար Աբդուլլայեւի այն նկատողութիւնը, որ մի օր, մի դէպքի առիթով, արեց Բագուից եկած մասնաժողովի անդամներին. նա ասաց. «Պարոններ, տարիների երկար շարքը ցոյց է տուել, որ Շամախուայ հայի եւ թուրքի հարց գոյութիւն չէ ունեցել եւ մենք ապրել ենք եղբայրաբար, համերաշխ եւ ինչքան կարճամիտ կը լինէինք, եթէ փոխանակէինք աւելի բարձր մտքերը մանրիկների, ընդհանուրը մասնաւորի հետ։ Այժմ, այս դաժան հանգամանքի մէջ էլ, պարոններ, խնդրում եմ ձեզ աշխատեցէք չը տարածել մեր մէջ Բագուի ձեր կուրացնող կասպեան քամին։ Մենք մեր շահերով եւ դառնութիւններով իրար հետ անբաժան հաշտ եղբայրներ ենք։» Զախախասդեան աւելացրեց. «Ապացոյց այդ խօսքերի անկեղծութեան թող լինի այն հանգամանքը, որ միւս բոլոր քաղաքների սովորութիւնից դուրս մեր բաղնիսներն անգամ խառն են. այսինքն առանց ուշադրութեան առնելու կրօնական նեղ հայեացքները, մենք այնտեղ էլ խառն ենք լողանում, մաքրվելով արտաքին կեղտից։ Իսկ ներքին պղտոր միտումներից ազատվելու եւ մաքրվելու համար, ցանկանում եմ, որ մտնենք ընդհանուր մարդասիրական փրկարար լողարանի բարոյականացնող լոյսը դռնից. դա է պահանջում նոյն իսկ մեր շահը եւ խաղաղութիւնը։»

Պ. Աբդուլլաեվի վերոյիշեալ խօսքերը բնո-

...ում, ամիսվում են իրանց մէջ չամախեցի ... եւ Թուրքի յատկանիշը հարեւան ազգերի ... գործակցութեան գործում։ Շամախու այժ... հանգամանքը մեզ աչկարա ցոյց տուին, որ մենք, ինչպէս ազէտի, նոյնպէս եւ ուրախ բոպէներում անգամ, անբաժան ենք։ Մանրամասն կարելի է ընդունել առհասարակ մեր ընդհանուր կեանքի վերաբերմամբ։

Միլիոնատէր պ. Անտոնեան իր բաժին բարեգործութիւնը իր ձեռքով կատարեց, 2—3 օր ... հայերին հաց բաժանելով։

Բաղարում սկսում են փայտեայ ժամանակաւոր խանութներ շինել եւ ժողովել այնտեղ ... եկած ապրանքից. այդպիսով այնտեղ ... քիչ շարժում է առաջանում։

Քաղաքի ընդհանուր վնասը կարելի է յայտնի դարձնել հիման վրա հաշուել 20 միլիոն ռուբլիների (որից շինութիւնների բաժինը հասնում է ... մինչեւ 8, ... քաղաքային գնահատութեամբ) մինչեւ 8, ... ապրանքի եւ ... իրերի վնասը մինչեւ 12 միլիոն ռուբլի։ Միայն մի վաճառական, որին քաղաքը լաւ են ճանաչում 600,000-ից աւելի վնաս կրեց։ Երկրաշարժի ցնցումներ տեղի ունեցան ամիս 17-ին, ցերեկվայ 3 ժամին, ու 19-ին, 3 ժամ 40 րոպէին, բաւական զօրեղ կերպով. նոր փլումներ պատահեցան։

Սմբատ Սարգիսբէկեան

ՆՍՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Մի քանի օր է, ինչ եղանակը բոլորովին փոխվեց մեզանում՝ չորային ու տաք օրերին յաջորդեցին խոնաւ ու անձրեւային օրեր. մերթ-մերթ գալիս է եւ ձիւն, սակայն չուտ է անհետանում. բայց շրջակայ սարերի վրա ձիւնը բաւական շատ է երեւում։ Եթէ այդ սարերը, որտեղից սկիզբն են առնում մեր գաւառի գետերը, ծածկված են լինում ձիւնի հաստ շերտով, գիւղացին ուրախանում է, որովհետեւ ամառը նա, թէեւ սակաւ, բայց ջուր կունենայ. իսկ եթէ ոչ, այն ժամանակ նա իր յոյսը դնում է անձրեւների վրա, որոնք շատ քիչ տարիներ են առատ լինում այստեղ։

Պէտք էր տեսնել, թէ քիչ առաջ, երբ ոչ ձիւն եւ ոչ անձրեւ կար, գիւղացու դէմքը որքան թթված էր եւ որքան յուսահատութիւն էր արտայայտում։ Ցուսահատութեան այդ բոպէին նա ծրագիրներ էր կազմում թէ՝ ինչպէս ամառը գալուն պէս «քեարհէզներ» հանելու ձեռնարկել այգիները ոռոգելու համար, ինչպէս ... ...

վայ ընթացքում նրա վրա ծախսված է 30 միլիոն ֆունտ ստերլինգ, իսկ մինչեւ 1902 թուականի մարտի 31-ը նա կարժենայ 175 միլիոն ֆունտ ստերլինգ, այսինքն մօտ 1600 միլիոն ռուբլի։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ լրագիրների հաղորդած տեղեկութիւններին նայելով, գաղթականական զօրքերի ապրուստն երկու եւ կէս անգամ աւելի թանգ է նստում, քան անգլիական զօրքինը։ Այսպիսով գաղթականութիւնների օգնութիւնը խիստ թանգ է նստում Անգլիային։

—Լոնդոնից հաղորդում են «Matin» լրագրին, թէ լորդ Կէրզոն, Հնդկաստանի փոխարքան, հրաման է ստացել անգլիական կառավարութիւնից դիմել աֆղանական էմիրին եւ լուրջ կերպով նախազգուշացնել նրան, որ այսուհետեւ նա չը հետեւի հակաանգլիական քաղաքականութեան։ Վերջին ժամանակ աֆղանական էմիրը, չը նայելով որ առաջվայ նման շարունակում է նպաստ ստանալ Անգլիայից, չէ կատարում Անգլիայի վերաբերմամբ այն պարտականութիւնները, որ յանձն է առել նրա հայրը։ Անգլիայում կարծում են, որ էմիրը ընկել է ռուսական քաղաքականութեան ազդեցութեան տակ։ Կառավարութիւնը մտադիր է հաղորդել էմիրին, որ եթէ նա չի կատարի արդէն կապված դաշնադրութիւնների պարտաւորութիւնները, այդ դէպքում նա կը զրկվի բոլոր նպաստներից։ Անգլո-հնդկական քաղաքական շրջաններում կարծում են, որ այդ սպասելիքը կարող է շատ լուրջ հետեւանքներ առաջացնել մօտիկ ապագայում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 24-ին Երմիտաժի դահլիճներում կայացաւ պարերեկոյթ։—Ֆինլանդական գեներալ-նահանգապետը ճանապարհ ընկաւ Պետերբուրգից։—Կայսերական պալատի մինիստրը Պետերբուրգից ճանապարհ ընկաւ արտասահման։—Շատ աջող հետեւանքներ տուեցին քէրքէչով հիւանդ ձիաների վրա արած փորձերը ացէտիլէնեան լապտերների միջոցով։

ԿԱԼՈՒԳԱ։ Երկրագործութեան մինիստր Երմօլով ճանապարհ ընկաւ Կալուգայից։

ՄՕՍԿՎԱ։ Ոստիկանութիւնը բացեց Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների օգտին կպցնվող մարկաների կեղծողներին։ Աշխատում էր մասնաւոր թատրոնների տոմսակներ ծախողների, կասիրների եւ կոնտրոլեորների մի ամբողջ խումբ։

ՎԱՐՇԱՎԱ։ Աւետարանական-առաքելական համայնքը Վարշավայում մտադիր է հիմնել իգական առեւտրական դպրոց։

ՊԱՐԻԶ։ Ռուսաց կառավարութեան պահանջմամբ ձերբակալված է մի ոմն Դրէյեր, որ մեղադրվում է Մօսկվայում 12,000 ռուբլի իւրացնելու մէջ. նրա մօտ գտնվեցին 1,100 ֆրանկ դրամ եւ երեք հատ հինգ հարիւրանոց թղթադրամներ։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրը կարդաց մինիստրների ժողովում մի հեռագիր, որի մէջ ասված է, թէ Մէտուէն, ենթարկվելով յարձակման Դէլարէյի կողմից, վիրաւորված է եւ գերի առնված։ Անգլիացիներից սպանված են 41, վիրաւորված են 77 եւ անյայտ կորել են 201 հոգի։

Կ. ՊՕԼԻՍ։ Ի բացակայութեան գատապարտված են բանտարկութեան ցմահ սուլթանի փեսայ Մահմուդ-Դամադ-փաշայի որդիները, որոնք փախել են Եւրոպա, ինչպէս նաեւ Խայդար-բէյ եւ գնդապետ Զէկի։

ԼՕՆԴՕՆ։ Որովհետեւ իրլանդական միութիւնը եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս, Սէֆֆօլկի գնդի մի բատալիոն, որին տեղեկութիւն էր տուած, թէ պէտք է ուղարկվի հարաւային Աֆրիկա, յանկարծ հրաման ստացաւ ուղեւորվել Իրլանդիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Торгово-Промышленная Газета» լրագրում տպագրված են ֆինանսների մինիստրութեան մէջ կազմված տեղեկութիւններ պետական եկեւմուտքի մասին անցեալ տարվայ 11 ամիսների ընթացքում։ Այդ տարվայ եկամուտները գերազանց են ծախքերից 152,000,000 ռուբլով։

26 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կայսերական պալատի մինիստրութեան գործերի վարչութիւնը ժամանակաւորապէս յանձնված է Նորին Մեծութեան կաբինէտի կառավարչի պաշտօնակատար գեներալ-մայոր Բիդզեվսկուն, իսկ Կայսերական Տան կալուածների վարչութիւնը—այդ վարչութեան կառավարչի պաշտօնակատար գեներալ-մայոր Իշխան Կոչուբէյին։

ՄՕՍԿՎԱ։ Այրվեցին ակնավաճառ Ֆաբերժէի արհեստանոցի երկու յարկերը։

ԲԱԳՈՒ։ Վերջին վիճակագրական տեղեկութիւններին նայելով, կարօտեալների թիւը Շամախում 12,000 է։ Երէկ գիշեր Շամախում զգացվեցին երկարատեւ ստորերկրեայ հարւածներ։ Շամախի հասաւ Պետերբուրգի երկրաբան Վէբէր։ Թիֆլիսեցի երկրաբան Շախկուլի արաբական արձանագրութեան միջոցով որոշեց, որ կործանված Ջումա-մզկիթը հիմնված է 1193 տարի առաջ։ Շամախի հասաւ Բարձրագոյն հրամանով ուղարկված ֆլեգելադիւտանտ իշխան Օբոլենսկի։

ԼՕՆԴՕՆ։ Կեսչեներ հաղորդում է Պրետորիայից. «Ցաւելով պէտք է հաղորդեմ խիստ տխուր տեղեկութիւն լորդ Մէտուէնի մասին. նա գնում էր Վինբուրգից Լիխտենբուրգ 900 հեծեալներով, որոնք գտնվում էին մայոր Պէրսիսի հրամանատարութեան տակ, եւ 300 հետեւակ զինուորների հետ՝ տանելով 4 թնդանօթ։ Նա մտադիր էր փետրվարի 23-ին Բօվիրայնէս-Ֆոնտէյնի մօտ միանալ Գրէնֆէլի հետ, որի հրամանատարութեան տակ կար մի հեծեալ զօրաբաժին՝ բաղկացած 1,300 մարդուց։ Հեծեալներից 500 հոգի հասան Մարիբօգօ-Կրաայպան, ենթարկվելով հալածանքի 4 մղոն տարածութեան վրա։ Նրանք հաղորդում են, թէ Մէտուէնի թնդանօթները, նրա սայլախումբը եւ այլն ընկել են բօէրների ձեռքը։ Երբ Մէտուէնին տեսան վերջին անգամ, նա արդէն գերի էր առնված։ Ուրիշ տեղեկութիւններ պարտութեան մասին դեռ չեն ստացված։ Երէկ, վաղ առաւօտեան, Դէլարէյի զօրքերը երեք կողմից յարձակվեցին Տվիդբօտի եւ Պալմիտնիլի մէջ տեղում Մէտուէնի զօրքերի վրա։ Կիտչէներ արդէն կարգադրել է զօրքեր ուղարկել այդ շրջանը եւ կարծում է, որ բօէրների գործունէութեան յանկարծական սաստկացման նպատակն է չեղել այն զօրքերի ճանապարհը, որոնք նեղում են Դէվէտին։

ԼՕՆԴՕՆ։ Նայելով Կիտչենէրի զեկուցմանը Պրետորիայից, մայոր Պէրէս զօրքի մնացորդի հետ միասին հասաւ Կրաայպան. նա հաղորդում է, թէ զօրաբաժինը ճանապարհ ընկաւ՝ բաժանվելով երկու մասի. առաւօտեան ժամի 3-ին նա դուրս եկաւ Վէսբօտից. մի ժամից յետոյ բօէրները յարձակում գործեցին։ Դեռ օգնական զօրքերը չէին կարողացել վրա հասնել, որ նրանք շրջապատեցին վերջապահ գունդը. նոյն ժամանակ բօէրները սրընթացաբար յարձակվեցին զօրաբաժնի երկու թեւերի վրա։ Յարձակումը սկզբում յետ մղվեց, բայց սարսափը տիրեց այն ջորիներին, որոնք լծված էին սայլերում։ Հեծեալները առաջ վազեցին ամենամեծ անկարգութեամբ, նրանց հետեւեցին սայլերում լծված եզները. բոլոր ջանքերը կանգնեցնելու նրանց ապարդիւն անցան։ Պէրէս ժողովեց 40 մարդ եւ դիրք գրաւելով, կանգնեցրեց եզներին։ Քաջարի, բայց անաջող դիմադրութիւնից յետոյ թշնամին խուժեց սայլերի շարքերի մէջ։ Մէտուէն վէրք է ստացել ազդրին։ Պէրէս շրջապատվելով անձնատուր եղաւ։ Մէտուէն դեռ եւս գտնվում է բօէրների բանակում։

ԲԼԱԳՕՎԵՇՉԵՆՍԿ։ Նահանգապետի կարգադրութեամբ փետրվարի 21-ից Բլագօվեշչենսկում մտցրած են սաստկացրած պաշտպանութեան կարգերը։

ԼՕՆԴՕՆ։ Բրօդրիկ կարդաց համայնքների ժողովում Կիտչենէրի հեռագիրը, որով հաղորդվում է, թէ Մէտուէն Տվիբօդի մօտ ենթարկվեց յարձակման Դէլարէյի կողմից։ Մէտուէն վիրաւորված է եւ գերի է առնված։ Անգլիական թնդանօթները ընկել են բօէրների ձեռքը։ Անգլիացիների վնասը—երեք օֆիցէր եւ 38 զինուոր սպանված են, հինգ օֆիցէր եւ 72 զինուորներ վիրաւորված են եւ մի օֆիցէր ու 200 զինուորներ անյայտ կորել են։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ, Ռ. Ց. Ամենամեծ հաճութեամբ կատարում ենք ձեր խնդիրքը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵԹՂԷՀԷՄ ԵԿԵՂԵՑՈՒ յարգելի ծխականներին ինդրում եմ չնորհ բերել առաջիկայ կիրակի, մարտի 3-ին, ժամի 12-ին, պատարագից յետոյ տեսնելու 1901 թուի եկեւմտից հաշիւը եւ հաստատելու 1902 թուի նախահաշիւը։

Գործակալ ա. մ. Զ. քահ. Զարդեղեան

2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւառարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Դզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Ցպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.

Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւառարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Արդէն ծանօթ է հայ հասարակութեան՝ որ բաւական ժամանակէ ի վեր, Վենետիկի Մխիթարեան Ուխտի միաբան Հ. Արսէն Ղազիկեան, սկսած է պատրաստել Հայկական Մատենագրութիւն, եւ կամ՝ Մատենագրութիւն Մատենագրութեանց ի սկզբանէ մինչեւ մեր օրերը։ Սոյն գործի կատարելութեան համար՝ անհրաժեշտ կարեւոր լինելով աչքի առաջ ունենալ հայերէն լեզուով գրված եւ լոյս տեսած որ եւ իցէ հեղինակութիւններ եւ թարգմանութիւններ,—քանիցս անգամ ալ տպագրված լինեն,—ուստի կը խնդրենք մեր յարգոյ հեղինակներէն եւ թարգմանիչներէն՝ որ բարեհաճեն մի մի օրինակ ուղարկել մեզ իրենց գրութիւններէն, որով մեծապէս նպաստած պիտի լինեն,—ի մօտոյ լոյս տեսնելիք,—հայկական մատենագրութեան կազմելութեան, եւ իրենց ուղարկած գրոց մասին ալ՝ ըստ պատշաճին՝ անթերի եւ կարեւոր ծանօթութիւնք զետեղված պիտի գտնեն նոր հրատարակութեան մէջ։

Արդ, այն հեղինակներն եւ կամ թարգմանիչներն՝ որոնք բնաւ իրենց հրատարակութիւններէն—որ եւ իցէ կերպով—մեզի ուղարկած չեն, կը փափագէինք՝ որ գոնէ այսուհետեւ փոխանակութեամբ մեր տպարանի գրոց՝ հաճին ուղարկել, ԿԱՆԽԱՒ ԻՄԱՑՆԵԼՈՎ ՄԵԶ ԻՐԵՆՑ ՈՒՂԱՐԿԱԾ ԵՒ ՄԵՐ ՏՊԱՐԱՆԷՆ ՓՈԽԱՐԷՆ ՈՒՂԱՐԿԵԼԻՔ ԳՐՈՑ ԱՆՈՒՆԸ։

Մեր հասցէն է Վենետիկ, Ս. Ղազար

Հ. Եսայի Տայեցի Մատենադարանապետ
P. Isaïe Tayétsi Bibliothécaire
Couvent Mechitiariste Venise (Italie.)

2—5

Լոյս տեսաւ
ԻԻՐԻՑ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ

армянскій поэтъ
СМБАТЪ ШАХЪ-АЗИЗЪ

(Քնարական էտիւդ)

ԳԻՆՆ Է 1 Ր.

Գրքոյկին կցած են՝ Սմբատ Շահ-Ազիզի լուսանկարը, պատկերը, «Լեւոնի Վշտի» մի շարք կտորների եւ այլ ոտանաւորների ռուսերեն թարգմանութիւնը։

Ցանկացողները դիմում են հեղինակին հետեւեալ հասցէով. Москва, Леонтьевскій пер. № 11, кв. 17, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому.

3—10

Թիֆլիսի Գործակատարների Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան Վարչութիւնը

փետրվարի 15-ից տեղափոխվել է իր սեփական ընակարանը, Գանձակայեայ փողոց, Աղէքսանդր Փրիդոնեանի տուն, ուր ընդունվում են իսկական անդամներից տարեկան վճարներ եւ ընկերութեան անդամ գրվել ցանկացող նոր անձերից—յայտարարութիւններ։

1—2

БЕРНДОРФСКІЙ МЕТАЛЛИЧЕСКІЙ ЗАВОДЪ
АРТУРЪ КРУШЪ
Въ МОСКВѢ, на Кузнецкомъ мосту



рекомендуетъ гостинницамъ и хозяйствамъ свои издѣлія изъ массивнаго МЕТАЛЛА „АЛЬПАКА“

Бѣло серебристаго цвѣта

въ натуральномъ видѣ, и покрытыя густымъ слоемъ чистаго серебра.
А также КУХОННАЯ ПОСУДА изъ ЧИСТАГО НИКЕЛЯ
Въ продажѣ во всѣхъ лучшихъ торговляхъ хозяйственныхъ предметовъ.

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՆՇԱՆ

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՆՇԱՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑԻ Զ—ՈՎ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Վերջին ժամանակներս ծախու երեւացին

ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

Նոյն տեսակ տիպիկներով եւ մակագրութիւնների նոյնանման տառերով էտիկէտների վրա, նոյնպէս եւ ծրարների ու թղթարկղների նոյն ձեւով, գործածելով նոյն գոյնի թուղթ եարլիկների եւ ծրարների համար, որոնք վաղուց մեր ֆիրմայի անհագին տարածումն ստացած պապիրոսների արտաքին տարբերութիւնն են կազմում։

ի նախազգուշացումն ամեն խաբեբայութիւնների

բոլոր էտիկէտների վրա մենք սահմանել ենք առանձին նշան, որ հաստատված է ֆինանսների մինիստրութեան արդիւնաբերական բաժնի կոմիտէի կողմից։ Մեր գործարանի նշանին նմանեցնելու համար յանցաւորները դատի կենթարկվեն օրինական կարգով։ Մեր ֆաբրիկատները գնելու ժամանակ խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել գործարանական նշանի եւ մակագրութեան վրա։

Н. И. БОЗАРДЖІЯНЦЪ С—МИ.

(տ. հ. կ.) 6—6

Дозволено Цензурою, Тифлисъ, 26 Февраля 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.